

## Հայտարարություն

<<<< Վայոց ձորի մարզի Հերիերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը,
- 2) Բարձրագույն կրթությունը,
- 3) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթի մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

- 1) Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
- 2) ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
- 3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
- 4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ),
- 5) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում),
- 6) Աշխատանքային գրքույկի պատճենը,
- 7) Զինվորական գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

3. Փաստաթղթերն ընդունվում են <<Վայոց ձորի մարզի Հերիերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 2020թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային այլ օրերից :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020թ. մարտի 30-ին, ժամը 15:00-ին, <<Վայոց ձորի մարզի Հերիերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Հերիեր, փ. 20, շենք 4:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 094010252: